

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

kype™ - hayartun.levon
Контакты Разговоры Звонки Вид Инструменты Помощь
HAYARTUN
Звонок Diljan Lark, продолжительность 01:03.
17:15
Звонки Diljan Lark
17:39

Մայիսի 5-ին, Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում թեւածում էր մանսուրյանական հոգեթով եւ խորխտ երաժշտության շունչը: Կենտրոնի

1 / 7

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

նախաձեռնությամբ այդ օրը թբիլիսահայությունը հնարավորություն ունեցավ

ունկնդրելու հայ տաղանդավոր երգահան, մաէստրո Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմի» ձայնագրությունը: Երաժշտություն, որը հայ ժողովրդի դարավոր պատմությունը մտովի թերթելու, Ուրարտուն պատկերացնելու, հայ արվեստի գույները զգալու եւ

հայ

շարականների հմայքն ըմբոշխնելու ուժն ունի

2 / 7

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

:

Թբիլիսահայ երաժշտասեր հասարակայնությունը, անշուշտ, քաջածանոթ է Տիգրան Մանսուրյանի երաժշտությանը: «Նռան գույնը», «Կտոր մը երկինք», «Մենք ենք, մեր սարերը

3 / 7

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

» եւ այլ ֆիլմերի համար գրած նրա ազգային շնչով երաժշտությունը սրտամոտ եւ հարազատ է հայ ունկնդրին:

Ուստի միանգամայն հասկանալի էր այն ջերմությունը, որով ընկալվեց «Ռեքվիեմը», ստեղծագործություն, որ նվիրված էր հայոց մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակին եւ որը դարձավ արեւմտյան ոգով գրված հայկական ռեքվիեմի փայլուն նմուշ:

4 / 7

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

«Հայարտան» տեխնիկական հագեցվածությունը հնարավոր դարձրեց ունկնդրումից հետո ուղիղ կապ հաստատել մաէստրոյի եւ ներկա հասարակության միջեւ: Ողջունելով միջոցառման մասնակիցներին, մեծ վարպետը պատմեց այն երկարամյա եւ նվիրական աշխատանքի մասին, որ նա կատարել է «Ռեքվիեմը» ստեղծելիս:

Մաէստրոյին ողջունեցին եւ տարբեր հարցերով դիմեցին գրող-թարգմանիչ Գիվի Շահնազարը, արվեստագետ Միքայել Գրիգորյանը, արձակագիր Արտեմ Գրիգորենցը,

5 / 7

«Հայարտուն » մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը »

ուսանողուհի Աննա Շահբազյանը եւ ուրիշներ:

Դիմելով Հայաստանի հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ Տիգրան Մանսուրյանին,

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը շնորհակալություն հայտնեց մեծ վարպետին միջոցառմանը մասնակցելու համար: Մաղթելով առողջություն եւ երկար կյանք, Սրբազան Հայրը

մաէստրոյին այստեղ Թբիլիսիում, «Հայարտանը» հանդիպելու ցանկություն եւ

6 / 7

«Հայարտուն» մշակույթի կենտրոնում հնչեց Տիգրան Մանսուրյանի «Ռեքվիեմը»

հույս հայտնեց:

Սրտառուչ երեկոն, որ կազմակերպել էին «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աշխատակիցներ Լեւոն Չիդիլյանը, Պավել Օգանեզովը եւ Վալերի Բաղալյանը, հանձին Տիգրան Մանսուրյան երաժշտի, դարձավ դասական արվեստի եւ արվեստագետի հետ շփվելու, երաժշտության, նաեւ խոսքի ուժն ու հմայքը զգալու իրատեսական հնարավորություն:

7 / 7